



## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Այնչությանն իր նշանավոր  $E = mc^2$  բանաձևն սրացել է 1905 թվականին: Բանաձևն ասում էր, որ նյութի մեջ թաքնված է հսկայական էներգիա և մնում է նրա օգտագործման որևէ հնար գտնել: Այդ ժամանակի ֆիզիկոսները դրան առանձնակի ուշադրության չարժանացրին, քանի որ նրա պրակտիկ օգտագործման հեռանկարը չէին տեսնում: Այդ կարծիքին էր նույնիսկ ինքը՝ Այնշտայնը: Սակայն, երեք տասնամյակ անց գիտության ու տեխնիկայի աննախասրեպ արագ զարգացումը նոր հնարավորություններ բացեց: հանաշխարհային տիրապետության ձգտող հիպոկրյան Գերմանիան շոսյորեն հովանավորում էր ռազմական հեղափոխությունները՝ օր առօրե արտոմային զենք ունենալու փափագով: Ինտերնացիոնալ հեղափոխություններ սկսվեցին նաև ԱՄՆ-ում: Համաշխարհային պատերազմում Գերմանիան պարտվեց, չկարողանալով իրացնել իր մարդասպան ծրագիրը: Բայց աշխարհը չազարվեց չարիքից: ԱՄՆ-ում սրբեղծեցին երկու արտոմային ռումբ, որոնք 1945 թ. ներկեցին Ճապոնիայի Հերոսիմա և Նագասակի քաղաքների վրա: Հարյուր հազարավոր մարդիկ ոչնչացան անմիջապես, մնացածները վարակվեցին ճառագայթային հիվանդությամբ և դարապարտվեցին դանդաղ մահացման: Մարդկությունը սարսափի մեջ էր: Ժամանակի ընթացում արտոմային զենք սրբեղծեց ևս մի քանի երկիր, ինչը մղեց փոխադարձ զգուշության և պատերազմի յուրաքանչյուր զսպաշապիկ դարձավ: Այսօր շատ անգամ ավելի հզոր ու ավերիչ զենքեր են կոտակված մոլորակի տարբեր անկյուններում: Դրանք ու դրանց արտադրության համար նախատեսված գործարանները վարակում են օդը, իսկ ռադիոակտիվ թափոնները, որոնք թաքցնում են հողի խոր շերտերում, վարակում են ստորերկրյա ջրերը: Արտոմային զենքի հետ կապված պարտությունը մարդկությանը ցույց տվեց, որ գիտությունը երկասյրի սուր է. այն կարող է ծառայել մարդկության կարիքներին, սակայն անբարոյական մարդկանց ձեռքում կարող է իսկական չարիք դառնալ: Մի իմաստուն ասել է. զենքերը երբ շարանում են՝ սկսում են կրակել: